



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1  
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » ՄԱՅԻՍԻ 2020 թվական, N 40-Ն

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն բնագավառի ծախսերն ավելացնել 2620.0 հազ. դրամով (բաժին 06, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121222, հոդված 5113-ը՝ 2020.0 հազ. դրամով, հոդված 4241-ը՝ 600.0 հազ. դրամով), (բաժին 06, խումբ 5, դաս 1, ծրագիր 51-ով նախատեսված ծախսերը պակասեցնել 800.0 հազ. դրամ, հ/հ 900262121339, հոդված 5134):
2. Ալավերդի համայնքի 2020 թվականի պահուստային ֆոնդը պակասեցնել 1820.0 հազ. դրամով:
3. Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներն ավելացնել 1220.0 հազ. դրամով (հ/հ 900265121534):
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

|    |        |            | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|----|--------|------------|------|-----|---------|
| 1. | Արտուշ | Աբելյան    |      |     |         |
| 2. | Կամո   | Երիցյան    |      |     |         |
| 3. | Արմեն  | Կարապետյան |      |     |         |

|    |            |              |   |  |  |
|----|------------|--------------|---|--|--|
| 4. | Սեյրան     | Հովհաննիսյան |   |  |  |
| 5. | Արայիկ     | Ձավարյան     |  |  |  |
| 6. | Հարություն | Ձավարյան     |  |  |  |
| 7. | Լաուրա     | Մելիքսեթյան  |  |  |  |
| 8. | Դավիթ      | Նոնինյան     |  |  |  |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ս.Գ. ԽԵՂՈՒՄՅԱՆ

|  |  |  |  |
|--|--|--|--|
|  |  |  |  |
|  |  |  |  |
|  |  |  |  |